

գրական սեռին, ուր արուեստագէտը թուղթին յանձնելու իր ցաւերը իր շուրջը կը գտնէ հատ-հատ, իր ներսը շատ-շատ, սանկ սեռային ակօսներէն ծլող կամ հոն հասնող: Դուն վէպն ես այն ժողովուրդին, որ զգաց ինչ որ ուրիշներուն գրուած է զգալ, զգայարանքներու ճամբաներէն, բայց ապրեցաւ մնայուն մահուան, տիրական գրականքին, ամէն բոլորէն իր հոգիին վրայ առկախ սարսափին ճիրաններուն մէջ եւ արեւը, ցորենը, գինին, ձէթը, մարդերու միտքը դիակներու վերածած ծամեց ու ծամեց, երբ իր քրտինքին գնովը իր այլազգ դրացիները այդ ամէնը կը փոխակերպէին հաշտ, հեշտ, քաղցր գինովութեան... Ո՛վ մեր վէպը: Դուն նման ես քիչ մը մեր հին գրականութեան միակ բարգաւաճ սեռին.- մեր պատմագրութեան, որ իր հազարաւոր էջերուն մէջ դրած է սա արիւնին քերթը-լածը, սա գերութեան տախտակները, սա անհուն ու անսպառ ողբերգութիւնը, ինչպէս իմ ցեղին իմաստի, երագի, երկինքի բոլոր տուրքերը: Ահա թէ ինչու սա հատորները («Մնացորդաց») այնքան քիչ կը թուին, երբ կը բաղդատեմ զանոնք իմ ներսս մթերուած ապրումներուն, մտածումներուն ահաւոր լեռներուն: Ի՛նչ դառն յաճախանք է իմ միտքին այն, որ մեր կեանքը եղաւ դարերով, թուրքին ճոկանին տակ: Ու դո՛ւք չէիք գիտեր, թէ հարիւրաւոր հատոր բաւ չեն գար միակ գեղի մը ապրումները այդ գերութեան դժոխքէն սեւեռելու: Ու վիպողը տրտում գաւակն է իր ժողովուրդին...: «Մնացորդաց»ի հազարաւոր էջերը շուքն իսկ չեն իմ պատանութեանս քանի մը տարիները զարնող զգացումներուն: Ու ասիկա առանց տարրական իսկ չափազանցութեան, խարդախման: Այդ է պատճառը, որ դրուագումը ուռի ինքնաբերաբար...: Ջարդը խնայուեցաւ այդ գեղին ոչ անշուշտ անոր համար, որ հրաշքը միջամտեց, այլ անոր համար, որ թուրք գեղերուն ու գազային ամէնէն ազդեցիկ, արիւնկզակ բռնապետը, Քէլ-էտհէմը, որ պէյ էր այդ օրերուն (աւելի յետոյ դէպի փաշայութիւն առաջատու պարզած, բայց կէս ճամբուն խողխողուած իր